


2072

6.18. 7



ՆՈՐ

ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 1 ՅՈՒՆՈՒԱՐ, 1929

ԹԻԻ 1

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

Նոր Աւետարեւր ի սրտէ կը շնորհաւորէ Նոր տարին բոլոր իր ընթերցողներուն և ընդհանուր ազգին:

Այսօր Նոր Տարի է: Բայց ի՞նչ կայնոր, որեւո՞ւն տակ և երկրի վրայ: Իմաստուն ժողովուրդը կ'ըսէ, «Ոչինչ»: Արեւ հին, ասողերը հին, երկիրը հին, մարդկութիւնը հին: Երէկ ինչ որ էր, այսօր նոյնն է. անցեալ տարի երկիրը և մարդկութիւնը ինչպէս որ կ'ընթանար, այսօր նոյնպէս կ'ընթանայ: Մարդկութիւնը էապէս է ինչ որ էր, անոր հոգեկան և մտաւոր կարողութիւնները, բնութիւնը, չարժաւորութիւնը: Նիւթական աշխարհի և ամբողջ տիեզերքի իշխող օրէնքները նոյնն են: Այն մարդկային սկզբունքները որ պատմութիւնը կը շինեն նոյն են:

Անուրանալի է թէ գիտութիւնը յառաջ կ'երթայ. մարդիկ շատ բաներ կը յօրինեն օգտակար, հրաշալի, տեսակէտով մը մարդկային կեանքը յեղաշրջող բաներ: Նորէն՝ քաղաքական աշխարհը մեծ ջանքեր կը թափէ երկիրը խաղաղացնելու, երկիրներու և ընկերութիւններու նիւթական վիճակը հաւասարեցնելու, հարուստներու և աղքատ-

ներու տարբերութիւնը պակսեցնելու: Ասոնք կարեւոր, թանկագին և գովելի ջանքեր են: Մարդկութեան բարերարներուն յարգը գիտնալու ենք և զոհողութիւնները գնահատելու ենք: Ապե-րախտութիւնը մեծ մեղք է:

Աշխարհի և մարդկութեան վիճակը այսպէս լինելով հանդերձ, սովորութիւն եղած է այս օրը Նոր Տարի անուանել: — Յիշատի շատ օգտակար եղած է նոր տարին գիմաւորել և շնորհաւորել:

Բնականաբար այսօր մեր խորհուրդները երկուքի կը բաժնուին. անցեալը յիշել և ներկան ու ապագան խորհիլ: Անցեալին մասին շատ պատճառներ ունինք Աստուծոյ փառք տալու: Տէրը մեզ շատ հաւանական վտանգներէ և փորձութիւններէ ազատ պահեր է: Եթէ այս օր մարմնով և մտքով հանգիստ և առողջ ենք, ասոնք Աստուծոյ մեծ շնորհքներն են: Ո՛չ մեր խելքը ո՛չ մեր հարստութիւնը և ո՛չ մեր ոյժը բաւական են մեզ պահելու:

Նաև անցեալ տարուան ընթացքին Տէրովմէ շատ բարիքներ ստացանք և վայելեցինք: Երբեմն ապերախտ զրանուելով մեր վիճակներուն վրայ շատ գանգատեր ենք, իբր թէ Աստուած մեր հետ մեր արժանիքին համեմատ վարուած չէ, մեզ չէ վարձատրած ինչպէս որ

պէտք էր վարձատրել: Մարդիկ եւս մեր ծառայութիւնները չեն գնահատած: Մենք ամենայն հաւատարմութեամբ ապրած ենք, ուրիշները մեզի հետ արդարութեամբ վարուած չեն: Մենք ասիէշատ աւելի հարուստ ըլլալու, մեծարուելու, և վարձատրուելու արժանի էինք, աշխարհ մեզի հանդէպ անարդար գտնուեցաւ:

Ո՛չ բարեկամներ, խնդիրը այսպէս չէ, մեր վայելած ամէն բարիքները, մեծ ու պզտիկ, նիւթական և հոգեւոր, անձնական և ընտանեկան, լոկ շնորհքներ են: Մեր հացը Աստուած տուաւ. գանձիկ վայելելու կարողութիւնը Անկէ է: Եթէ եկեղեցիներ ունեցանք զԱյն պաշտելու, և դպրոցներ՝ մեր զաւակները կրթելու, բնակարաններ՝ պատսպարուելու, եթէ աշխարհ խաղաղ վիճակի մը մէջ մնայ և մեր կեանքը խաղաղութեամբ անցաւ, ասոնք և հազարաւոր բարիքներ զոր վայելեցինք, ամենն ալ աստուածային շնորհքներ էին: Հաւատա ասոր: Հիմա մեր գտնուած տեղն ու վիճակը մէկ Արեւեկներ է: (Ա. Թագ. 7. 12.)

Ի՞նչպէս ունեցանք այս Արեւեկները, ո՞վ բերաւ մեզ հոս. ի՞նչ բաներու, ի՞նչ դէպքերու, ի՞նչ պարագաներու մէջէն անցանք մինչև որ հոս հասանք: Կասկած չկայ թէ Տէրովը նախախնամութիւնը մեզ հոս առաջնորդեց, գործածելով մեր օգտին համար ամէն բան, ուրախաբա և ցաւալի, դիւրին և դժուար, լայն և նեղ պարագաները: Երբեմն յաղթեցինք, երբեմն յապթուեցանք, մերթ շահեցանք, մերթ կորսնցուցինք, երբեմն լացինք երբեմն խնդացինք, Աստուած այս ամէնը գործածեց մեզի Արեւեկներ մը կանգնելու: Ասոր համար Աստուծոյ փառք տալու ենք: Եթէ անցեալէն մեր սորված դասերը ներկայիս մէջ գործածենք անցեալը մեզի միշտ օրհնաբեր պիտի ըլլայ: Ուստի՝ ներկան և ապագան ի՞նչպէս գործածելու ենք որ այս Նոր Տա-

րին օրհնաբեր ըլլայ ամենուս: Նոր Տարին այս օր մեր ձեռքը զրուած գիրքի մը կը նմանի որուն 365 էջերը բոլորովին ձերմակ են: Պէտք է որ մենք անիկա լեցնենք. և գիտնալու ենք թէ, ինչ որ գրենք, աղէկ կամ գէշ, անոնք մեր նկարագրը պիտի շինեն: Անցեալին մէջ բարի փրկամարտութիւններ և բարձր խաղաղութիւններ, որոնք հաւատարմի մեր ամէն ջանքերուն մասամբ իրադրութեցան: Ահա, միշտ Նոր պատեհութիւններ կը տրուի որ զանոնք շարունակենք:

Աստուած մեզի սրբեր, որեւայրիներ, աղքատներ, հիւանդներ, տգէտներ, չ'ապաշխարած մեղաւորներ և այլն ամէն տեսակ օգնութեան կարօտ եղողներ պիտի զրկէ. ի՞նչ գիրք պիտի բռնինք անոնց հանդէպ: Առակին մէջ յիշուած զիւտացիին և քահանային օրինակներուն պիտի հետեւինք թէ Բարի Սամարացիին: Արդեօք մեր անձնական շահը և հանգստութիւնը մեր աչքերը և ականջները զոցի՞ր պիտի տան որ ուրիշներուն հեծեծանքի ձայնը չի լսեմք և տառապանքները չի տեսնենք: Արդեօք քարացած սիրտերով պիտի վարուինք անոնց հետ: Ի՞նչ բաժին պիտի բերենք աշխարհը խաղաղ և լաւ ապրելու վայր մը ընելու համար: Քանի՞ սգաւոր պիտի մխիթարենք, քանի՞ անօթիներ պիտի կերակրենք, քանի՞ մերկեր պիտի հագուեցնենք. և այլն:

Տարուան վերջը մեր մարմինները առողջ և միտքերը զարգացած գիճակի մէջ տեսնելու համար պէտք է որ մեր ժամանակը, հարստութիւնը, տաղանդները ամենաօգտակար կերպով գործածենք: Մարմին, հոգի, սիրտ և կեանք մաշեցնող, ապականող ամէն արարքներէ, չար ունակութիւն և սովորութիւններէ զգուշանալու ենք: Մեր արժանապատուութիւնը ոչ մէկ բանի հետ փոխելու չենք: Ծառայութեան հոգի

մշակելու ենք մեր մէջ. և ծառայութիւնը օգտակար և ընդունելի ընելու համար պէտք է հեռի ըլլանք անօգուտ քննադատութիւններէ, իշխանական և հպարտ հովէ, ուրիշները անարգելէ, ինքնահաւանութենէ եւ արծաթասիրութենէ, և այլն:

Տէրջմէ Նոր սիրտ և Նոր հոգի ուղէ. այն ատեն կեանքդ, նկարագիրդ, ազդեցութիւնդ, ամէն բան Նոր պիտի ըլլայ: Երկինք, երկիր, մարդիկ, բնութիւնը, ազգդ Նոր պիտի ըլլան: Խորհուրդներդ, եզրակացութիւնդ, միջավայրդ, *սարին* Նոր պիտի ըլլան.

Հախպ

Կ. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՆՊԱՏԱԿԸ

Նոր Տարուան առթիւ սովորութիւն է Նոր որոշումներ տալ: Շատ գիւրին է կարգ մը լաւ որոշումներ տալ, զանոնք Նոր փորձի առարկայ դարձնել. այս իր արժէքը ունի: Բայց աւելի օգտակար է ուշադրութեամբ քննել թէ 1928 ի վերջը ի՞նչ է մեր իրական վիճակը, և ապա որոշում տալ մեր քննութեան իւր արդիւնք երեան ելած սխալները շտկելու և պահանքները լրացնելու համար:

Մեր եկեղեցիներուն հոգեւոր վիճակը երբ այսպիսի քննութեան մը ենթարկենք՝ ի մէջ այլոց պիտի գտնենք որ միտում մը կայ եկեղեցիին և համայնքին սովորական գործնականութիւնը տեւական պահելով գոհանալու համար: Եթէ այս սովորական գործերը անխափան կատարուին մեր կրօնական գործերու մասին ինքզինքնիս հոգէ գերծ կրնանք նկատել:

Անշուշտ մեծ առաւելութիւն մ'է եկեղեցական գործերուն գոհացուցիչ վիճակի մը մէջ ըլլալը: Բայց երբ մենք սկսինք եկեղեցիի մասին իբր հոգեւոր հաստատութիւն մը խորհիլ և Քրիստոսի իր եկեղեցիին համար ունեցած գաղա-

փարականներու տեսակէտէն դիտել զայն, պիտի տեսնենք որ շատ տարբեր նպատակի մը պէտք ունինք: Շատ իմաստուն և օգտակար քայլ մը առած կ'ըլլանք երբ Նոր Տարուան առթիւ մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք այս հոգեւոր, գիտակից, որոշ և զօրաւոր նպատակին վրայ: Քանզի եկեղեցիները փոխանակ իրենց մասնայատուկ նպատակը իրազործելու մէջ յառաջ երթալու օրուան հոսանքներէն քշուելու վտանգին մէջ կը գտնուին:

1. Եկեղեցիները կենարար հոգեւոր նպատակի մը պէտքը ունին, որ ելեքտըրական հոսանքի մը պէս անոնց մէջէն անցնի և զանոնք ելեքտրականացնէ: Աստուած Հոգի է: Ծջմարիտ պաշտամունքը հոգեւոր ըլլալու է: Բըրիստոնեաներու յատկանիշը այն է թէ անոնք Քրիստոսի Հոգին ընդունած են և Հոգիով կը քայլեն: Եթէ ուէ եկեղեցի մը այս Հոգիին մէջ միութիւն մը չունի և Հոգիով այս կեանքին վերաբերեալ նպատակէ մը գուրկ է, ի՞նչպէս կրնայ իբր քրիստոնեայ եկեղեցի մը իր գոյութիւնը արգարացնել:

2. Եկեղեցիները իրենցմէ դուրս գտնուող աշխարհի մասին նպատակի մը կը կարօտին: Կենսալիր եկեղեցիի մը նշաններն են արտածաւալ գործունէութիւն և հետաքրքրութիւն: Այն եկեղեցիները որ իրենք իրենցմով կը հետաքրքրուին իրենց ղէմ կը հակասեն, իրենց եսին մէջ ամփոփուած քրիստոնեաներու պէս: Եկեղեցին աշխարհի մէջ Քրիստոսի մարմինն է, և իր առաքելութիւնն է ունենալ անձնուէր գործնէութիւն մը, — խորհիլ ուրիշներու մասին, աղօթել ուրիշներուն համար, ծառայել ուրիշներուն, Քրիստոսը բերել ուրիշներու կեանքերուն մէջ: Եկեղեցիներու գոյութեան նպատակը, զոր Բըրիստոս ունի իր միտքին մէջ, արտածաւալական է: Մեր եկեղեցիները գի-

տակցօրէն կը բաժնեհն Քրիստոսի այս նպատակը:

Յ. Եկեղեցիները մանուկներու եւ երիտասարդներու վերաբերեալ նպատակի մը, այսինքն կրթական նպատակի մը պէտք ունին ո՛չ միայն իրենց երիտասարդներուն համար, այլ բոլոր երիտասարդներու համար, որ անոնց ձեւը կալ կեանքերը մեծցնող եւ ճոխացնող ազգեցութիւններու տակ ձեւ առնեն եւ է՛ն բարձր գաղափարականներու համեմատ մեծնան: Այս ուղղութեամբ առատածեռնօրէն պէտք է վատնենք ջանք, մտածում, գրամ յաջորդ սերունդի կիները եւ մարդերը սիրոյ, տեսիլքի, ծառայութեան մէջ եւ Քրիստոսի տուած Հոգիին մարմնացնելու մէջ աւելի լաւ շինելու հաստատ նպատակով: Մենք մեր մանուկներուն եւ մերը չեղող որբերուն ապրուստին մասին կը խորհինք: Բայց եթէ մենք իրապէս հոգիին կը սերմանենք մենք ամենէն աւելի անոնց հոգեւոր բարեկեցութիւնը եւ զարգացումը նկատողութեան պիտի առնենք:

1929 ի համար ՈՐՈՇ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ պէտք ունինք:

ձ. Է. ՄԵՐԸԼ

համակերպում մը կը պահանջին:» Ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Դէմ դնելէ եւ պայքարելէ դադրել եւ նկանակի մը մէկ մասովը գոհանալ սորվիլ՝ երբ ամբողջը ձեռք ձգել կարելի չէ, դժուար դաս մըն է, բայց հիւանդի մը համար կեանքի լաւ փրկիւնօրէնութիւն մըն է. եւ ան զարմանքով պիտի գտնէ թէ ինչ որ ինքը կէս կը նկատէ՝ իբր է՛ն գոհացուցիչը պիտի յայտնուի, երբ գոհ սրտով զայն ընդունի:»

«Ես հիւանդներէն սորվեցայ թէ բազմին կրնանք յաղթել ո՛չ անոր դէմ մաքառելով, ո՛չ ալ անկէ խոյս տալով, այլ անոր համակերպելով եւ գոհ սրտով զայն ընդունելով. թէ շատ անգամ մարդերու միջոցաւ մենք կրնանք զԱստուած ճանչնալ. թէ հոգեկան քաջութիւնը աւելի բարձր տեսակէն է քան մարմնականը. եւ թէ աւելի՛ բարձր տիպէն քաջութիւն մը պէտք է կորսուող պայքար մը անվեհերօրէն կուուելու համար քան թէ յաջող մէկը, մտնաւանդ երբ սկիզբէն յայտնի է թէ ան անյոյս մէկն է եւ տարիներ պիտի տեւէ:»

ՔԱՂՀԱՆ

ԽՈԿՈՒՄՆԵՐ

ԶԱԽՈՂԱՆՔԻ ՄԷՋ ՀԱՄԱԿԵՐՊՈՒՄ

Սարանաք Լէյքի մէջ մեծ ապաքինարան մը կայ, որուն հիմնադրին՝ Տօքթ. Թրուտոյի արձանին վրայ այս նշանակալից խօսքը գրուած է. «Երբեմն բուժել, շատ անգամ ցաւերը ամօքել, միշտ մխիթարել:»

Տօքթ. Թրուտօ իր անձնական փորձառութեամբը եւ ուրիշներու, մանաւանդ հիւանդներու կեանքերէն ազդուելով իր սորված սա մէկ ճշմարտութիւնը կ'արձանագրէ իր ինքնակենսագրութեան մէջ. «Յաղթանակներ կան որոնք աշխարհային անյաջողութեան մէջ գոհ

Աստուծոյ Հոգիին գալը արեւին ծագիլն է: Երկիրը նոր աշխարհ մը կըլլայ երբ արեւը ծագի: Լոյսը եւ կեանքը ամէն տեղ երկիրը լեցնելով կը ծանուցանեն թէ ան ո՛րչափ նոր է: Բայց արեւը աշխարհի մը կը կարօտի վրան ծագելու եւ փայլելու համար. եւ ան իր լոյսի հրաշքները կը զործէ ճիշդ այդ նախկին լեռներէ եւ ձորերէ կազմուած աշխարհի վրայ, որ մթութեան մէջ ամայի եւ տխրատեսիլ մնացած էր: Այս է զարժը:

ՖԻԼԻՓՍ ՊՐՈՒՔՍ

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ «ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ»Ը

Այսօր «Նոր Աւետարեւր»ն ալ Նոր տարին կ'ողջունէ ամենայն զոհունակութեամբ. այս նոր տարին «Աւետարեւր»ի համար ուրիշներէն աւելի նշանակութիւն ունեցող նոր տարի մ'է, քան զի տասնեակ տարիներէ ի վեր մահաւորիւն պատճառով հետեւանքով լռելու զատապարտուած «Աւետարեւր»ը՝ այսօր վերակենդանացած, հրապարակ իջած և զործօն տարի մը բոլորած է։ Անշուշտ պարտինք խոստովանիլ որ «Նոր Աւետարեւր»ը իբրեւ սկզբնական գոյութիւն, ունեցած է չափ մը թերութիւններ, բայց վստահ ենք որ սկսուած այս գործը՝ կամաց կամաց, բայց հաստատուն քայլերով պիտի յառաջդրիմք և յաջողութեամբ պիտի պսակուի։

«Նոր Աւետարեւր»ի յինչեւոր Սուրբոյ Հայ Աւետարանական եկեղեցիներն են, ուստի ապահովաբար կրնանք ըսել որ քանի կանգուն մնան մեր եկեղեցիները՝ «Նոր Աւետարեւր»ն ալ կանգուն պիտի մնայ իր ստանձնած գործին պատենչին վրայ և անկից անդադար իր վեհ պայքարը պիտի մղէ՝ անհաւատութեան, տգիտութեան և չարին դէմ։ Վստահ ենք որ նա իր որդեգրած այս ծանր ու վսեմ ձեռնարկին մէջ չպիտի թերանայ, նա միշտ քրիստոնէութեան և ճշմարտութեան պաշտպան պիտի կանգնի, և աշխարհային լափւրիւնթոսներէն դէպի վեր լուսավառ փարոսի մը նման բարձրանալով՝ խաւարն ու մշուշը պիտի փարատէ և այսպիսով ամենուն բարի առաջնորդ մը պիտի հանդիսանայ։ Շատ կը սիրենք յուսալ նաև որ ասիկա մեր ընտանեկան և ընկերային վարք ու բարքը պիտի վերացնէ ու ազնուացնէ։

«Նոր Աւետարեւր»ի ընթերցողները պէտք է լաւ ըմբռնեն որ զայն վերսկսիլ և կարենալ շարունակել այնչափ ալ դիւրին չէ եղած, անիկա նեղ պարագա-

ներու տակ ծնունդ առած և տարուան ընթացքին իր դժուարութիւնները ունեցած է։

Յիրաւի «Աւետարեւր» բառը ինքնին որչափ քաղցր և մեր սրտերուն ո՛րչափ մօտիկ է, նոյնպէս անկէ բղխած Աւետարանական ածականը մեր ճակտին վրայ կը կրենք. բացի աստի երբոր յիշենք «Աւետարեւր» թերթի երեք քառորդ դարէ ի վեր մեր հոգեւոր, մտային և ընկերային մշակոյթի մէջ խաղցած կարեւոր դերը այն ատեն այս անունը մեզի՝ ա՛լ աւելի սիրուն և ա՛լ աւելի պաշտելի կը դառնայ։

Մեզի համար «Աւետարեւր»ի վերսկըսուած յուսադրիչ երեւոյթ մը եղած է, քանզի անոր քաղցր արձագանքները՝ Կիլիկիոյ Հայ Աւետարանական եկեղեցիներու ղեկորներուն Սուրբոյ ափերուն վրայ վերստին հաստատման և անոնց ինքնամփոփման Աւետիսը մեզի կուտային, անոր լոյս տեսնալը դարձեալ յուսադրիչ էր, քանզի նա հազար ու մէկ զրկանք ու տառապանքներէ յետոյ, հայու կենսունակութեան և անոր վերականգնելու յատկութեան կենդանի մի ապացոյցը մեզ կը ներկայացնէր։

Շատ ուրախառիթ եղելութիւն մ'է որ «Աւետարեւր»ը՝ անցեալին մէջ ամեն տեսակէտով միշտ բարձր մակարդակ մը ունեցած է, անձնական կիրքերէ, յարանուանական բանավէճերէ և կուսակցական կռիւններէ. անոր նպատակի կէտը բարձր և վսեմ իտէալներ եղած է. ընթերցողներ անկէ միշտ հոգեւոր եւ բարոյական սնունդ, գիտական և ընկերային առողջ գաղափարներ քաղած են։ Մաղթենք որ նա իր անցեալին մէջ հետապնդած ուղղութիւնը շարունակէ եւ ապագային մեզի՝ ա՛լ աւելի վսեմ և ա՛լ աւելի թանկագին ծառայութիւններ մատուցանէ։

Օ՛ն ուրեմն, ո՛վ Աւետարեւր, կրկին ամեն կողմ ուժգին հնչեցուրքու Աւե-

տիսդ, մինչև որ քու ձայնդ մեր սրտերէն արձագանք տայ. թերեւս դուն ալ երբէք չէիր խորհիր որ բոլորովին օտար երկինքներու և անակնկալ պարագաներու տակ կրկին լոյս պիտի տեսնէիր: Աւա՛ղ որ քու առաջուան յաճախած չէն օճախներդ մտած, երկնամբարձ եկեղեցիներդ քանդուած եւ կայտառ բաժանորդներդ անհետացած են: Բայց մի՛ վհատիր, քեզի համար ծխացող նոր օճախներ, ծլող նոր սերունդներ և ճշգրտացող նոր բոյներ կազմուած են, ուր քեզի համար աւելի մեծ կարօտ մը կայ: Այո՛, դուն արդէն հոյակապ շէնքերէն աւելի խարխուլ հիւղակները, փառաւոր լոյսերէն աւելի պլպլացող աղօտ կայծերը կը սիրես, քեզի համար փլատակներէն պալատներ եւ կայծերէն արեղակներ կրնան ծնանիլ: Ուրեմն փութա՛, թափանցէ՛ ամենուրեք, ուր որ երթաս հոն լոյս, կեանք, յոյս ներշնչէ, միսթարի՛ տրտմածները, վերցո՛ւր ինկածները և սորվեցո՛ւր տղէտները: Սիրելի Աւետարեր, որքա՛ն հաճելի է մեզ յուսալ որ կրօնական խարխափումներու մէջ թաղուած մեր նոր սիրնդեան համար ճշմարիտ ռահվիրայի մը պաշտօնը պիտի կատարես: Շատ կը սիրենք յուսալ նաեւ որ «Նոր Աւետարեր»ի ներկայութիւնը նոր տարուան մէջ, մեր անհատներու եւ եկեղեցիներու մէջ նոր միութեան և նոր ներդաշնակութեան ոգի մը պիտի արժարձէ. նոյնպէս կը փափաքինք որ անկա մեր ընտանիքներու մէջ աւելի ջերմ քրիստոնէական մթնոլորտ մը պիտի ստեղծէ: Սրտանց կը մաղթենք որ քու սուրբ խորանիդ վրայէն այժմ և միշտ ճշմարիտ քրիստոնէութեան և ճշմարիտ ազգասիրութեան անուշահոտ խունկերը թող բուրեն ու վերանան գէպի երկինք:

Ուստի նոր տարուան առթիւ «Նոր Աւետարեր»ի համար արդիւնաւոր և երկայն տարիներ մաղթելով հանդերձ՝

կը փափաքինք որ մեր բոլոր եկեղեցիները և «Աւետարեր»ի բոլոր բարեկամները ամեն տեսակէտով զայն քաջալերեն և անոր զօրավիգ ըլլան: Պարտինք սիրել ու զուգորդուլ անոր վրայ քանդի անկա մեր և մեր պապերուն բարեկամն է, պարտինք հետաքրքրուիլ անով քանդի անկա մեր եկեղեցիներուն միակ օրկանն է, վերջապէս պարտինք կարգաւ ու տարածել զայն քանդի անկա մերն է:

ՏՕՔԹ. Ա. ԶԷՊԷԾԵԼՆ

ԾՆՈՒՆԴԻ ՊԱՐՏՔ ՄԸ

Խթումի իրիկունն էր. օսասիկ կ'անձրեւէր և խտաշունջ հով մը անձրելի կաթիլները Մանուկներու Տան (որբանոց ին) մէջ Մայրիկին սենեակին պատուհաններուն կը գարնէր: Նա երիտասարդ էր, անոր ալիքառն մազը և հոգերով զմաւորուած դէմքը գինքը աւելի տարիքոտ կը ցուցնէին քան թէ իրականին մէջ էր: Սյդ իրիկունը մանաւանդ շուարած երեւոյթ մ'ունէր:

Առջի գիշեր Տունը նոր մանուկ մը բերուած էր, որ շատ տխուր պատմութիւն մ'ունէր. բայց Տունը լեցուած էր եւ մանչերու բաժնին մէջ անկուն մը պզտիկ անկողնի մը մէջ դրուած էր ան հոն ննջելու համար: Մայրիկը չէր գիտեր թէ ինչպէս զայն պիտի հազուեցընէին և պիտի կերակրէին: Եկամուտները պակասած էին եւ ուսեստի գինքը՝ բարձրացած և լքուածներու և թափառականներու իր մեծ ընտանիքը շատ պէտքեր ունէր: Հառաջեց ան. բայց երբ իր աչքերը վերցուց պատին վրայ կախուած օրացոյցի մը վրան այս տողերը իր ուշադրութիւնը գրաւեցին. «Իմ Աստուածս քու բոլոր պէտքերդ պիտի գոհացնէ: Անմիջապէս ան ծնւրադրեց այս նոր բռնին համար Աստուծոյ աղօթելու: Յանկարծ դուռը զարնուեցաւ և երիտասարդ հիւանդապահ մը ներս մտաւ ու ըսաւ. «Մայրիկ,

պարոն մը կ'ուզէ Տունը տեսնել:» Անմիջապէս ուրախ պատրաստակամութեամբ մը ոտքի ելաւ խորհելով թէ արդեօք այս իր աղօթքին պատասխանն էր: Այս պարոնը, երկայնահասակ և լըջադէմ օտարական մը, ճամբորդի երևոյթն ունէր, որ իր յայտնածին համեմատ դէպի Լոնտոն իր ճամբուն վրայ այս աւանէն անցնելու ատեն՝ փափաքած էր այս Տունը այցելել: Մայրիկը պտտցուց այցելուն, խօսելով մանուկներու այնպիսի եղանակով մը, որ կը յայտնէր թէ անոնց հանդէպ գուրգուրանք ունէր: Վերջապէս խաղի սենեակը եկան, և անմիջապէս յիսուն գոյգ հիւսկոտ աչքեր լրինց ուղղուեցան:

«Մի քանի խաղալիքներ ունիմ», ըսաւ մարդը, «թոյլտուութիւն կա՞յ զանոնք պղտիկներուն բաշխելու»: Տըրուած հաստատական պատասխանին վերայ մարդը խոշոր պայուսակի մը մէջէն դուրս հանեց սիրուն գնդակներ, կառաշարներ, ձիեր, որսի կենդանիներ, պուպիկներ և իւրաքանչիւր մանուկին մէջ մէկ հատ տուաւ: Պղտիկները ըսկրսան ուրախութեամբ կանչել և այս անակնկալ Պապուկ Ծնունդին շուրջը խաղալ: Մարդը ապա գետինը նստաւ և իր շուրջը հաւաքուած պղտիկներուն մի քանի բառերով պատմեց թէ ինչպէս Աստուած իր Որդին աշխարհին նուիրեց Ծնունդի այդ առաջին առտուն: Ապա Մայրիկը այս տեսարանէն ներշնչուած և ուրախ հարցուց, «Զեպէ՞ մէկը կ'ուզէ՞ այս պարոնին Ծնունդի երգ մը երգել»:

Կարճ լուծթենէ մը վերջ կապոյտ անուշ աչերով և սիրուն գանգուրներով շատ պղտիկ մանչուկ մը յառաջ անցաւ և ըսաւ. «Մայրիկ ես կ'ուզեմ երգել»: և ան սկսաւ երգել մանուկ Գրիստոսի մասին, որ իր զլոխը դնելու համար բարձ միսի չունէր: Երգը շատ անոջ և ազգեցիկ էր. և երբ օտարականը պղ-

տիկներուն շնորհակալութիւնները ըստանալէ վերջ անոնցմէ կը բաժնուէր՝ Մայրիկը անոր աչքերուն մէջ արցունքներ տեսաւ:

«Խնդիրք մ'ալ ունիմ», ըսաւ մարդը, «կրնա՞մ տղոյ ննջարանն ալ տեսնել»:

Զարմանքով լիցուած մայրիկը զայն վերի պղտիկ սենեակ մը առաջնորդեց, ուր քսանըհինգ պղտիկ անկողիններ զետեղուած էին:

«Ո՞վ կը քնանայ հոս», հարցուց օտարականը, ցուցնելով այն անկողինը որ նորեկ որբը կը քնանար:

«Ծնունդի երգը երգող այդ պղտիկ տղան», պատասխանեց Մայրիկը պարզ կերպով, «ան բացարձակապէս անտէր է և լքուած, և ինչպէտ տեղ չունէինք ստիպուեցանք զայն ներս առնել»:

Օտարականը իր չէքի տետրը դուրս հանեց և անոր մէջ խոշոր գումար մը արձանագրելով Մայրիկին տուաւ, որ տեսաւ թէ գումարը տղուն ապագան ապահովելու չափ մեծ էր:

«Կը խնդրեմ որ այս ընդունիք իբր իմ Ծնունդի նուէրս», ըսաւ մարդը այնպիսի կերպով մը որ Մայրիկը կ'արգելէր նոյնիսկ շնորհակալութիւն յայտնելէ: Ապա իր պարպուած պայուսակը առաւ, Մայրիկին ձեռքերը թօթուեց և երբ «Մանուկներու Տուն»էն դուրս պիտի ելլէր յոնկարձ և տղարձաւ և ըսաւ.

«Գիտե՞ս, ասկէ երեսուն տարիներ առաջ առանց բարեկամի, առանց տունի, անբաղձալի տղայ մ'էի, և այդ պղտիկ անկողինը իմն էր. և ես պարտք պէտքի ուրիշ տղու մը տալ այն պատահութիւնը՝ զոր, փառք Տէրոջ, դուք ինձի տուիք:

Արտասուելից աչքերով Մայրիկը դիտեց ճամբուն վրայ անոր հեռանալը, մինչ յանկարձ միտքը եկան աստուածային այս խօսքերը. Մատթ. Լե. 40:

ԹՐԳ. ՆՕՏԱՐ

ԵԿԵՂԵՑԻ ՄԵԾ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

2. ՍԱՎՈՆԱՐՈՂԱ

Աստուած տարբեր երկիրներու մէջ տարբեր կերպերով հիներուն խօսած է: Այս ճշմարտութիւնը ճիշդ է ո՛չ միայն Ս. Գիրքի մէջ յիշուած մարդերու համար, այլ նաեւ ուրիշ տեղերու և երկիրներու համար: Մանաւանդ եկեղեցական պատմութիւնը ուսումնասիրող ամեն մէկ մարդ գիտէ որ Աստուած «Լինքզինք առանց վկայութեան չթողուց» Գործք. 14. 16: Երբեմն յառաջ եկած են այնպիսի քարոյիչներ, բարեկարգիչներ եւ առաջնորդներ, որոնք անընդամստ պայմաններու և անակնկալ պարագաներու տակ կարևոր զործեր կատարած եւ Գիրքաստի թագաւորութեան մեծապաշտ ազգած են:

Մեր յօդուածաշարքին առաջինը նւիրած էինք թիթեղագործի մը կեանքին ուսումնասիրութեան, այն թիթեղագործին՝ որ բանտի նկուղին մէջ իր գրիչով ծառայեց Աստուծոյ: Այս անգամ ուսումնասիրութեան առարկայ պիտի ընենք Կաթողիկ եկեղեցիին մէջ սնած կըրօնականի մը կեանքը: Այս գորշ պարեգօտով միաբանը թէպէտ իր կեանքը վանքերու մէջ անցուց, բայց անոր պատգամը և ձայնը սարսեց Ֆլորէնս քաղաքը և ամբողջ Իտալիան:

Quisquis nostram Tegeam

Սավօնարօլա 1452ին ծնաւ Իտալիոյ Ֆէրարու աւանին մէջ: Հայրը բժիշկ էր, և կը փափաքէր որ նոյն ասպարէզը ընտրէր նաեւ իր զաւակը, որուն այս նպատակին համեմատ կրթութիւն մը տուաւ: Բայց երիտասարդ Սավօնարօլա կ'զգար թէ իր կոչումը հօրը փափաքէն կը տարբերէր: Այն դարուն Իտալիոյ մէջ հարուստները շատ հարուստ էին, կալուածն ու իշխանութիւնը ազնուականներու և կղերականներու կը պատկանէին, իսկ աղքատները շատ աղ-

քատ էին և ազնուականներու ձեռքին տակ գերիի մը կեանքը կ'ապրէին: Քաղաքներու մէջ հաճոյամոլութիւնը, անբարոյականութիւնը և ոճիրը ընդհանրացած էին, իսկ ճշմարտութիւնը, արդարութիւնն ու առաքինութիւնը հազուադէպ դարձեր էին:

Սավօնարօլա քանի այս տխուր երեւոյթները կը դիտէր իր մէջը տարբեր կեանք մը ապրելու փափաքը կ'արթննար. և այսպիսի խնդիրներու վրայ խորհրդածելու և խոկալու համար Փօգետի ափերուն վրայ կամ ուրիշ անբնական տեղեր կը պտտէր: Վերջապէս խորհեցաւ թէ այս մտատանջութենէն ազատուելու միակ ճամբան կուսակրօնութիւնը ընդունիլ էր, հետեւաբար գաղտնի կերպով իր տունը ձգեց և Պոլոնիայի մէջ Տոմինիկեան վանքը մտաւ, երբ 23 տարեկան էր: Հոս իբր փրկսփայլութեան ուսուցիչ եօթը տարի դաս տուաւ երիտասարդ միաբանիւրուն: Այս տեղի յաջողութիւնը զինքը առաջնորդեց Ֆլորէնսի Տոմինիկեան վանքը, որ Ս. Մարկոսի անունով կը յորջորջուէր: Ֆլորէնս գիտութիւններու և գեղարուեստի մէջ շատ աւելի յառաջ գացած էր քան նոյնիսկ Հռոմը. հոն գիտութիւնն ու գեղարուեստը կարծես պաշտամունքի առարկայ դարձած էին: Բայց անոր ընկերային, բարոյական և հոգեւոր կեանքը շատ ցած մակարդակի մը իջած էր և մեղքը անոր իշխած էր: Սավօնարօլայի սիրտը կ'այրէր քանի այս վիճակը կը դիտէր: Քաղաքին աղտոտ բարքը և մեղքի հանդէպ անտարբերութիւնը ծանր կերպով կը ճնշէին այս գիւղացի վանականին վրայ, որ ցերեկ գիշեր տխրութեամբ կ'անցնէր իր ժամանակը: Երբ Սավօնարօլա Մեծ Պահքի առթիւ քաղաքներու մէջ քարոզչութեան ղրկուեցաւ՝ անոր ձայնը սաստիկ ուժգնութեամբ ըսկըսաւ որոտալ բեմերու վրայէն: Ֆլո-

րէնսի զարգացեալ և փափկասուն ժողովուրդը երբէք չ'ախորժեցաւ այս խնտաբարբառ վանականէն, որ զրեթէ միայն պզտիկ շրջաններու մէջ փոքրաթիւ համակիր ունկնդիրներ ունեցաւ, եւ քաղքենի շրջանակներու մէջ սառն անտարբերութեան հանդիպեցաւ: Իսկ Սալօնարօլա իր բոլոր սրտովը կը սիրէր այ՝ քաղաքը, որ իր հայրենիքը չէր, բայց որուն մէջ նոր և փառաւոր երուսապէ մի մը կարելիութիւնները կը տեսնէր:

Այս տաճարները Ֆլորէնսի բացարձակ միահեծան իշխանն էր Լօրէնզօ տը Մէտիչի, որ շատ հեղինակաւոր, հարուստ և լուսաւորեալ ազնուական մ'էր: Այս մարդը Սալօնարօլան իր շրջած գիւղերէն քաղաք հրաւիրեց և հրամայեց որ իր նախկին գործը շարունակէ Տոմինիկիտան վանքին մէջ: Հոս վանահայր ընտրուեցաւ այս քաջախօս կղերը, որ բայցօղին մէջ և վարդիններու մէջտեղ ըսկըսաւ դաստանդել երիտասարդ աշակերտներուն, զորոնք սովոր էր «մեր հրեշտակները» կոչել. ան իրր դասաւորէր կը գործածէր Ս. Գիրքը: Կը պատմուի թէ Սալօնարօլա ինքը բոլոր Ս. Գիրքը գոց սորված էր. բայց իր կարողութիւնը աւելի փայլուն կերպով կ'երևար զայն մեկնելու և սորվեցնելու մէջ: Ուսուցչին այս կարողութեան հռչակը սկսաւ կամայ կամայ տարածուիլ քաղաքին մէջ, ուսկից շատ մը քաղաքացիներ սկսան վանք յաճախել, և բազմին մէջ աշակերտներուն ետևը դիրք գրաւած մտիկ ընել Սալօնարօլայի մեկնութիւններուն: Այսպէս վանական կեանքը, — թէ՛ մեկնութեան պահերուն և թէ՛ բեմի վրայ և կամ ուսուցչական աթոռին վրայ — իր ապագային համար պատրաստութեան և կրթութեան շրջան մը եղաւ:

Սալօնարօլայի հրապարակային առնչութեանցովն կեանքը:

Սալօնարօլա տալիս անգամ սկսաւ քարոզել վանքին եկեղեցիին մէջ, 1489 Օգոս. 1ին երբ հոս խօսեցաւ միայն վանականութիւնը ամբողջ եկեղեցին լեցուցած էր և զրաւն եղողներուն զրեթէ տեղ մնացած չէր. այնպէս որ շատերը վանդակորմի ձողիկներուն փաթթուելով ոտքի վրայ մտիկ ըրին: Եկեղեցիին բարեկարգութիւնը իր քարոզին նիւթ ընտրած էր, որ երեք մասերէ կը բաղկանար, 1) Եկեղեցին պէտք է բարեկարգուի, և նորոգուի, 2) Բոլոր Իտալիան պէտք է պատժուի, 3) Այս պատիժը շատ մօտալուտ է: Իր շուրջը տեսած չարիքէն ա՛յնչափ ազդուած էր որ բառերը բերնէն կրակի պէս կը հոսէին և հեղեղի պէս մարդերը կը քշէին կը տանէին: Այս քարոզիչը, որ իր խօսածներովը լեցուած էր, կրակոտ նայուածք, փայլուն դէմք, կայծկլտացող կապոյտ աչքեր, իմաստալից և արագ խօսուածք մ'ունէր: Հետեւաբար անոր քարոզները զարմանալի և անբացատրելի յուզում և մեծ ազդեցութիւն մը յառաջ բերին: Նոյն իսկ շատերը ըսին թէ բեմին վրայ անոր քով կայնած հրեշտակ մը կամ գլխուն վրայ Մարիամ Աստուածածինը տեսան: Ունկընդիրներու բաւմոթիւնը ա՛յնչափ աւելցաւ որ վանքին եկեղեցին ա՛յլ չկրցաւ զանոնք պարունակել, և Սալօնարօլան ստիպուեցաւ 1491ին քարոզել քաղաքին Մայր եկեղեցիին մէջ, որ շատ ընդարձակ, աւոտօրէն լուսաւորուած, զրեթէ անպարզ քարաշէն պատկառազգու շէնք մ'էր, և անոր պարզ սիւները, կամարները, սալայատակը, առանց նստարանի միջոցը, և արձագանդող մերկ պատերը վանական քարոզիչին հոգիին և գործին համապատասխան միջավայր մը կ'ստեղծէին: Ժողովուրդը կէս զիշերին կ'արթննային և մոլթին ու ցուրտին, հովին և անձրևին տակ ժամերով կ'սպասէին որպէսզի հոն տեղ մը կարենան ապահովել: Կը կարգանք թէ մեծ ու

պզտիկ, կիներ և էրիկ մարդեր «քարոզ լսելու կ'երթային, իրր թէ հարսանիքի գացած ըլլային»: Երբեմն մի քանի հազար մարդեր եկեղեցին կը լեցնէին և երեք չորս ժամ կատարեալ լուսթեամբ մինչև քարոզի ատենը կ'սպասէին:

Որունկնդիր ժողովուրդին մէջ շատ մը ականաւոր մարդիկ կային, սրտնք անկեղծօրէն իրենց հայրենիքը կը սիրէին և անոր ներկայ վիճակին համար կը մտաւտանջուէին: Սալօնարօլա անվախ աւետարանիչ մ'էր, առանց մարդերէն քաշուելու համարձակ կերպով մեղքի դէմ պատերազմ կը հրատարակէր: Անոր վայրոյթը կը բորբոքէր մանաւանդ երբ տեսնէր աշխարհասիրութիւն, տագնաութիւն, վաշխառութիւն, աղքատներու կեղեքում, եայլն. և հին մարգարէներու պէս անվեհեր կերպով կը ծանուցանէր թէ Աստուած զգուանք կը զգայ այսպիսի մեղքերէ: Բայց կրօնքին շինիչ և գրական կողմը չէր անտեսեր, և միշտ մարդերուն կը յորդորէր որ աղօթքի և Ս. Գրքի ուսումնասիրութեան ժամանակ տան, և շեշտելով կը յայտնէր թէ հաւատք, սէր և Աստուծոյ խօսքը աւելի՛ կարեւոր են քան եկեղեցական արարողութիւնները: Ասով հանդերձ Լուսեռի պէս բողոքական չէր ան, այսինքն եկեղեցիէն ելլելու կամ անոր դէմ գործելու մասին երբեք չէր խորհեր: Անոր նպատակը եկեղեցին ներսէն բարեկարգել և մաքրագործել էր: Այս քաջ աւետարանիչը իր հակառակորդներուն ընդդիմութեան պատճառաւ իր այս նպատակին զոհ գնաց, մինչ անոր իրականացումին համար կ'աշխատէր:

(Շարունակելի) Ի. ՄէրճԼ

ԱՆՁՆԱԿԱՆ ՇՓՈՒՄ

Ծորտարարութեամբ բոլոր ձիւղերուն մէջ ձեռական աշխատանքը կը փոխանակուի մեքենական զործողութիւնով, և գիւտերու շնորհիւ մեքենան տակա-

ւին կը շարունակէ մարդուն տեղը գրաւել բոլոր արդիւնաբերական ձեռնարկներու մէջ: Նոյն երեոյթը կը տեսնուի այսօր հոգեւոր և կրթական հաստատութիւններու մէջ, ուր կ'աւելնայ կազմակերպական աշխատանքը գարգացեալ մեքենականութեան մը միջոցաւ, բայց կը պակսին մարդկային անձնական շփումները ձեռ առլու համար անմահներու: Յիսուս նկարագրիւնները կերտելու մէջ իրր գերազոյն միջոց կը գործածէր անձնական հպումը: Տր. Ֆրանսիզ Ի. Քլարք կը գրէ թէ՛ իր մէկ Կիրակին ինչպէս անցուց Ուանամէյքըրի հետ և Ֆիլատէլֆիայի իր մեծ եկեղեցիին մէջ: Գիշերուան ժամը 9 ին ան ա'լ յոգնած ըսաւ. «Կեանքիս մէջ ամէնէն աւելի զբաղեալ Կիրակիս է»: Նոյն օրը ինը ժողովներու յաճախած էր: Բայց զարմացաւ երբ հասկեցաւ թէ Ուանամէյքըր 11 կրօնական պաշտամունք կատարած էր: Պատմութեան է'ն արպատրիչ մասը այս չէր տակաւին:

—Ս. Գիրքի Դպրոցէն աղջիկ մը կը պակսի այսօր, ըսաւ Ուանամէյքըր:

—Ի'նչ, ըսաւ Տր. Քլարք, երեք հազարէն միայն մէկ հատ կը պակսի:

—Այո՛, մէկ հատ, որուն մասին տեղեկագրուեցաւ թէ հիւանդ է. և ա'յս գիշեր իսկ պէտք է տեսնենք զայն:

Ապա Տր. Քլարք և վաճառականներու իշխանը, Ուանամէյքըր, եկեղեցիէն դուրս ելան և այդ մեծ քաղաքին մէջ պզտիկ աղջիկը գտան, որուն դէմքը պայծառութիւն մը ստացաւ երբ իրենց մուտքը տեսաւ: Ուանամէյքըր աղջիկին քովը նստաւ, անոր պզտիկ ձեռքէն իրընեց և սկսաւ անոր զուարթօրէն խօսիլ, մինչ պզտիկին դէմքը սկսաւ ուրախութեամբ փայլիլ: Ապա, փոքրիկներու այս մեծ սիրահարը ծնրադրեց և աղօթեց: Տր. Քլարք իր միաքը պահեց անձնական հպումի արժէքը:

Ա. Կ.

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ե. Ք. ԶԱՆԻՑ ՄԻՈՒԹԵԱՆՑ
ՀՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Միսս Բուրժ Սիպլերի, Ամերիկեան Պորտի երիտասարդութեան մէջ բացած գործին քարտուղարը, Նոյ. ամսուան մէջ այցելից քաղաքս, և Նոյ. 18 ին Ք. Զանից ութը միութիւններուն համագումարին մէջ խօսեցաւ, որուն կարճ մէկ ամփոփումն է հետեւեալը:—

Այն կեանքը որ ինքն իր մէջ ամփոփուած է՝ կը մեռնի, իսկ այն կեանքը որ իրմէ զուրս կը տարածուի և ուրիշներու կեանքերուն մէջ արդիւնքներ յառաջ կը բերէ՝ կ'ապրի: Իրմէ զուրս ելլելով ուրիշներուն մէջ ապրիլը՝ Քլարիստոսի օրինակին և նկարագրին էական մէկ մասը կը կազմէ:

Ամերիկայի մէջ բոլոր յարանուանութիւններու բոլոր եկեղեցիները ամեն տարի որոշ երկիր մը կ'ընտրեն՝ միսիօնարական ուսումնասիրութեան առարկայ դարձնելու համար զայն: Այս տարի ուսումնասիրութեան նիւթն է Ափրիկէն: Յաւաջիկայ տարուան (1929) համար կը խորհին իբր նիւթ ընտրել Հնդկաստանը:

Մենք՝ Ամերիկայի մէջ՝ մեծ ներշնչումներ ստացիր ենք Հայ ազգէն: Հայերը իբր ժողովուրդ մեծ պատեհութիւն մ'ունին: Անոնք Քրիստոսը կրնան քարոզել իրենց կեանքերուն մէջ, զԱյն ազրելով իրենց զրացիներուն առջև: Չկայ աւելի՝ վսեմ բան մը քան այնպէս ապրիլ՝ որ քու կեանքդ Յիսուսը չգիտցողներուն համար օրինակ մ'ըլլայ: Երիտասարդ մը կը ճանչնամ որ այսօր հրաշալի ազգիցութիւն մ'ունի: Իր բարեկամներէն մէկը այս ազգիցութիւնը բացատրեց ըսելով՝ թէ այս երիտասարդը Քրիստոսը ամեն կերպով իրեն օրինակ ըրած է: Ան կը գտնէ լքուած, կարօտ և անօղնական մարդերը, որպէս

զի անոնց բարեկամանայ և օգնէ: Անոր ամբողջ կեանքը լոյս մըն է:

Ես կը մաղթեմ որ դուք աշխարհածաւալ քրիստոնեաներ ըլլաք, և կ'ազօթեմ որ աշխարհը ձեր պատճառաւ աւելի՛ լաւ, աւելի՛ քրիստոնեայ և աւելի՛ բարեկամական ըլլայ: Դուք հետըզհետէ ուրիշներու մասին սորվելու և անոնց ծառայելու նոր միջոցներ պիտի գտնէք: Աշխարհի ծառայելէ մի՛ վախճաք, անոր համար որ ան շատ ընդարձակ կ'երևայ, իսկ դուք ինքզինքնիդ փոքր և տկար կ'զգաք: Երբէ՛ք մի մոռնաք որ աշխարհը չըջապատող քրիստոնեական բարեկամութեան մեծ շղթային մէկ մասն էք, և միշտ յիշեցէք սիրով լեցուն օգակ մ'ըլլալու համար: Սիրոյ Աստուածը իր ծառայութեան մէջ ձեզ սիրող ընէ:

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՏՐ. Բ. Ա. ԹՕՐՐԻԻ ՄԱՀԸ

Աշխարհածանօթ աւետարանիչ Տր. Բ. Ա. Թօրրի մեռած է Հոկտ. 25ին, 73 տարեկան հասակին մէջ: 1900—1905ին իբր շրջիկ աւետարանիչ զօրծած է Արևմտեան եւ կեդրոնական Եւրոպայի եւ Մայրապոյն Արևելքի մէջ: 1905—10 աւետարանչական զօրծունէութիւն ունեցած է Հիւս. Ամերիկայի ցամաքամասին վրայ: Վերջին տարիներուն աշխատած է իբր ուսուցչապետ Լօս Անճէլէսի Մ. Գրքի Հաստատութեան մէջ և իբր մասնաւոր դասախօս՝ Մուտիի Սուրբ Գրքի Հաստատութեան մէջ: Հեղինակն է 100է աւելի գեքերու և տետրակներու: «Թօրրի ուժեղ անձնավորութիւն մը եւ կազմակերպող մեծ տաղանդ մ'ունէր, համոզուած պահպանողական քննադատ մը եւ սոսկալի վիճաբանող մ'էր. թէպէտ օժտուած էր Մուտիի ուժով, բայց չունէր վերջինին փափկութիւնը, և համամարդկայնական զգացումները:»

**ՊՈՒԼԿԱՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԵՏԸ ԿԸ
ԽՈՍՏՈՎԱՆԻ**

«Պուլկար Ազգ. Եկեղեցին, որ Յոյն Օրթոդոքս եկեղեցիին անհատեալ մէկ ճիւղն է, թէպէտ ազգային զարգացումին համար մեծապէս ծառայած է, բայց իր հոգեւոր ազդեցութիւնը կը նուազի,» կ'ըսէ Սօֆիայի Մետրոպոլիտը:

Մր. Ի. Բիկզ՝ Տը Քանկրիկէյշընէլիսթի մէջ կը գրէ որ Պուլկար Բող. յարանուանութիւններու առաջնորդները յաջող աշխատանքի մը լծուած են միացեալ Աւետ. եկեղեցի մը կազմելու համար:

**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ
ՀԱՄԱԺՈՂՈՎՈՐ**

Ուաշինկթընի մէջ Մ. Նահանգներու եպիսկոպոսական եկեղեցիին երեք տարին անգամ մը կատարուող համաժողովը զումարուեցաւ Հոկտ. 10—25ին: Համաժողովը կը բաղկանար երկու մարմիններէ, 1) եպիսկոպոսներու ժողով՝ մասնակցութեամբ 100 եպիսկոպոսներու 2) պատգամաւորական ժողով՝ մասնակցութեամբ 400 ներկայացուցիչներու, որոնց կէսը կղերական և կէսը աշխարհական էին: Ամենամիծ խնդիրն էր Աղօթադրքի բարեփոխութեան լրացումը որ 15 տարիներէ ի վեր մեծ աշխատանքի առարկայ եղած էր: Համաժողովը որոշեց Բող. Եկեղեցիներու դաշնակցային խորհուրդին անդամակցիլ: Վերջին ժողովին մէջ կարգացուեցաւ Հովուական Նամակը և անոր պատճէնները զրկուեցան բոլոր կղերներուն՝ եկեղեցիներու մէջ կարգացուելու համար: Այս նամակին մէջ շեշտուած էին եկեղեցական միութեան յոյսը և հակապատերազմեան զօրաւոր ձգտումները: Եպիսկոպոսական ժողովուրդէն քսան հազար ունկնդիրներ ներկայ էին այս ժողովին մէջ:

ԹՈՒՐԲԻՈՅ ՆՈՐ ԿՐՕՆՔԸ

Թուրք ազգայնականները սկսած են կրօնքն ալ բարեկարգել իրենց ըմբռ-

նումներուն համեմատ: Կ. Պոլսոյ համալսարանին աստուածաբանական կամառէն մասնախումբ մը, որ Ազգ. կառավարութեան կողմանէ կազմուած է, կը յայտարարէ թէ «Կրօնքը կենսունակութեան նոր շրջանի մը մէջ պէտք է մտնէ, և պէտք է բարեկարգուի... զիտական միջոցներով և բանականութեան օգնութեամբ»: Այս մասնախումբը ապա կը ներկայացնէ բարեկարգութեան համար հետեւեալ սկզբունքները, — զիտական ուղղութիւն, ազգայնական ոգի, ռամկավարական վարչութիւն, պաշտամունքի և աղօթքի պարզութիւն: «Գօրանի տաճկերէն թարգմանութիւնը չէ է՛ն կարեորը», կը յարէ այս մարմինը, «Գօրանի նշանակութեան և գաղափարներուն նոր մեկնութիւնը և արժէքին վերաճչուով անհրաժեշտ է...: Բոլոր այս բարեկարգութիւնը իրականացնելու համար կիրարկութեան ծրագիր մը պէտք է պատրաստուի...»

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՊՈՀԵՄԻՈՅ ՄԷՋ

Ձէխօսլօվաքիոյ մէջ (հին անունով Պոհեմիա) ներկայիս երեք կրօնական հասարակութիւններ կան, — Հռովմէական Կաթոլիկ, հին Աւետ. եկեղեցի, որ Յովհ. Հուսի ժամանակ հաստատուած է և որ շատ զօրաւոր և զօրծօն է հիմա երկու տարի առաջ տեղի ունեցած կրօնական արթնութեան շնորհիւ, և երբորդ նոր Կաթոլիկ եկեղեցին, որ վերջերս Հռովմէն անջատուած է: Սա վերջինը ատենուան մը համար պահեց իր զուտ կաթոլիկ նկարագիրը, բայց հիմա շատ արմատական դարձած է թէ՛ իր աստուածաբանական և թէ՛ ընկերային տեսակէտներուն մէջ, այնպէս որ իր վրայ դրուած յոյսերը չհաստատեց Հռովմի դէմ իր բողոքին մէջ աւելի ուժգին յայտնուելով քան թէ աւետարանական եռանդի մէջ:

ՊԱՊԻՆ ԲԱՂԱՍԵՐԸ

Վերջերս այն լուրը թէ 60 տարիներէ լիւր միտքերը գրադեցնող եկեղեցիի եւ պետութեան յարաբերութիւններուն վերաբերեալ հարցը լուծուած է եւ Պապին անկախ հողամաս մը ունենալու բազմանքին գոհացում տրուած է, մեծ հետաքրքրութիւն արթնցուցած էր միտքերուն մէջ: Բայց յետագայ դէպքերը ժխտեցին զայն: Ասկէ առաջ արդէն գրած էինք թէ ինչպէս երիտասարդներու կրթութեան խնդրին մէջ հակառակութիւն ծագած էր ֆաշիսթներու եւ Վադիգանի միջեւ եւ Մուսօլինի հրամայած էր կազմալուծել բոլոր կաթոլիկ Պօյ Սքաուտ խումբերը: «Օսսէրվաթօրէ» թերթը, Վադիգանի օրկանը, այս խնդրին լուծումին համար կը գրէ, «Կաթոլիկ եկեղեցին պէտք է կատարեալ անկախութիւն վայելէ, որ իր աստուածային պաշտօնը կատարելապէս կարենայ կատարել»: Այս կը նշանակէ թէ տակաւին որչափ հեռու է այս խնդրին լուծումը:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Բոլոր աշխարհի ներկայիս 356,146 Կ. Դպրոցներուն մէջ 3,603,517 պաշտօնական եւ 29,411,435 աշակերտներ կան: Չորս տարուան մէջ աշակերտութեան թիւը 254000էն աւելի աւելցած է:

ՆՈՐ ԺԱՄԱՆՈՂՆԵՐ


Դեկ. 5 ին Պէյրութէն Հալէպ ժամանեցին Փրօֆ. Զ. Ա. Պէզճեան եւ իր ազնուափայլ արիւնը: Յարգելի Փրօֆ.ը թէպէտ քիչ մը ծերացած՝ տակաւին կը պահէ իր թարմ եւ ժպտուն դէմքը, քաղցր եւ սրամիտ խօսուածքը: Սիրելի նախկին ուսուցչի գալուստովը Սուրիոյ մէջ իմացական մեծ ոյժ մըն ալ կ'աւելնայ, որ տակաւին արդիւնաւոր ԸԼԼՈՒՆՅՈՅՐ կը ներշնչէ մեզի:

Զուլեյերիացի Օր. Պ. Բօնըր եւ Աբրահամ Սոճա Լեոնեան Դեկ. 6 ին քաղաքս եկան: Սոճան գտանք սենեակին մութ անկիւնը նստարաններէ շինուած մահճակալի մը վրայ նստած, ծունկերուն վրայ վերմակ մը ձգած, լայն եւ ոսկրոտ թիկունքը հին պաթանիա մը առած, երկայն մազերով ծածկուած գլուխը բուրգի թելով հիւսուած գտակ մը դրած: Կմախք մըն էր Սոճան, որ հին ճգնաւորական սուրբերու երևոյթը կ'ընծայէր. հակառակ տկարութեան եւ անկուամի մը պատճառաւ իր ցաւող ոտքին ուրախ էր ան, եւ լեցուն եւ ուժը տակաւին չկորսնցուցած ձայնովը շարունակ կը խօսէր, տալով իր պարզ ու շինիչ պատգամները իրին յատուկ ոճովը: Դեկ. 7 ին իր անկողինը բեմ ըրած խօսեցաւ իր շուրջը հաւաքուող ծանօթներուն եւ բարեկամներուն:

Օր. Պ. Բօնըր, ծանօթ իր աւետարանանչական ջերմեռանդութեամբն ու շինիչ գործնէութեամբը, նպատակ ունի ատենուան մը համար Հալէպ մնալ եւ հոգեւոր հաւաքոյթներ սարքել: Դեկ. 12 էն սկսեալ այս գումարումները ամէն իրիկուն տեղի կունենան Բէմի շայ Աւետ. եկեղեցիին մէջ, ուր հոժ բազմութիւնը կը գլխի լսելու հոգեւոր պարզ ճշմարտութիւնները:

Մարաշի մէջ տակաւին 60-70 հայեր անշուք կեանք մը կը քաշքշեն, իսկ Այնթապի մէջ, որ զրեթէ աւերակ է տակաւին հազիւ տասնեակ մը հայեր կը գտնուին: Միօրօնարական դպրոցները եւ հիւանդանոցները փակուած են կառավարութեան հրամանով:

Վեր. Ե. Հատիտեան Հալէպ եկած է Մամլէթէյնի թոքախտաւորներուն ի նըպաստ հանգանակութիւն ընելու: Լիայոյս ենք որ ժողովուրդը առատաձեռնութեամբ պիտի յիշէ այս թշուառները:



ՄԵՆԴԵԱՆ ԾԱՌԻՆ ՄՕՏ

Ծընունդ եկաւ, հնչէ՛ կոչնակ անուշ դաշնակ:

Ո՛հ բա՛ց մեզ քու դռներ,

Շատ պաղ կ'ընէ ձմեռ,

Դողան մանկունք քեզ մօտ,

Ունին շատս մեծ կարօտ:

Ծընունդ եկաւ, հնչէ՛ կոչնակ անուշ դաշնակ:

Ծընունդ եկաւ, հնչէ՛ կոչնակ անուշ դաշնակ:

Լըսէ՛ք մանչ ու աղջիկ,

Եկէ՛ք ներս մի քիչիկ,

Ձեզի կայ շատ ընծայ

Թող ամեն սիրտ ջնծայ:

Ծընունդ եկաւ, հնչէ՛ կոչնակ անուշ դաշնակ:

Ծընունդ եկաւ, հնչէ՛ կոչնակ անուշ դաշնակ:

Շողուն մոմք գոյնդգոյն

Սիրտ տան մեր ամենուն,

Փոքր մանկունք Աստուծոյ

Ապրին հոս անվրդով:

Ծընունդ եկաւ, հնչէ՛ կոչնակ անուշ դաշնակ:

Թրգմ. Գերմ.

ՏՕԳԹ. Ա. Ճէղէձեան

ԽԱՆՃԱՐ ՊԱՊՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պո՛ւմ... հուրզզզզ... պո՛ւմ...
պո՛ւմ... պո՛ւմ.....

Պապուի ահանջը պայթելու մօտ էր, առկայն զէնքի ձայներէն վախնալու տեղ հաճոյք կ'զգար: Ամեն բան այնքան խընամքով կարգադրուած էր որ Պապու կը վախնար թէ գուցէ իրենց ձեռնարկը առանց գիպուածի մը վերջանար: Պապու քաջ տղայ մ'էր: Այդ գիշեր իր պաշտօնը սա էր. — Մուլթէն օգտուելով մտնել ոստիկանապետին գրասենեակը, զրան նիզերը հանել, իր հայրը, պապն ու երկու հօրեղբայրները ներս առնել, և ապա սպասել նոր հրամաններու:

Ժամացոյցի մը չափ կանոնաւորապէս Պապու կատարած էր իր պաշտօնը. ու հիմա կը լսէր ճերմակ մարդուն՝ քովի սենեակը իր անկողինին մէջ խռկալը, մինչ իրենք մեղմով դուրս կը հանէին փոքր բայց ծանր սնտուկը՝ որ ոստիկանապետին գրամը կը պարունակէր:

Սակայն յանկարծ տան փոքրիկ շուռը արթնցեր ու հաչել սկսած էր. ու գողերէն մին իր ապուշ խելքը կորսնցընելով՝ շանը վրայ զէնք պարպած էր, ու անոր ձայնէն ամեն բան խառնակութեան մատնուած էր: Ճերմակ մարդը արթնցեր ու իր անկողինէն դուրս ցատկեր էր, ճրագը վառելով գողերը փախցուցիր էր: Պահապան ոստիկաններն ևս աղմուկին վայրը հասած ըլլալով՝ գողերը ի վերջոյ սնտուկը թողլով՝ փախչիլ կը ջանային ու իրենց փախած միջոցին զիրենք հալածողներուն վրայ զէնք կը պարպէին:

Ժամ մը ետքը, ոստիկանապետին տնէն հինգ մղոն հեռի ճամբէ մը եղնորու սայլ մը դանդաղ, դանդաղ կը յառաջանար: Կնճոռոտ թուխ ճակատով, ճերմակ մօրուքով, կարմիր մեշքանով, ու ծանր ոսկեգոյն օղերով ծերուկ մը սայլը կը քշէր, քովը տարիքով իրմէ փոքր երեք հոգի նստած, իսկ սայլին

մէջ յարգէ անկողինի մը վրայ երկու կին ու տղայ մը պառկած ըլլալով: Թարմացնող զով գեփիւռ մը կար, ինչպէս յաճախ կ'ըլլայ Հնդկաստանի մէջ առտուն կանուխ, արեւ ծագելէն առաջ. ու կիսալուսինը արեւմուտքին մէջ սկսեր էր աներեւութանալ: Միակ լոյսը որ ճամբան ցոյց կուտար սայլին տակը կախուած միացող լապտերն էր: ... Յանկարծ զոյգ մը զօրաւոր լոյսեր հորիզոնին վրայ երեցան, ու շուտով իրենց մօտենալով կանգ առին: Երբ թօմօպիլը սայլին քով հասաւ, վեց հատ երիտասարդ հնդիկ ոստիկաններ օթօէն դուրս ցատկելով սայլը շրջապատեցին: «Ո՞վ էք, ծերունի, և ո՞ւր կ'երթաք», հարցուց անոնցմէ մին:

«Ե՛ս», պատասխանեց ծերուկը խորունկ անմեղութեան ու զարմացման չեղտով մը, «ես խեղճ երկրագործ մ'եմ, որ ընտանեօք եղբորս քենիին թոռան հարսնիքին կ'երթամ»:

«Ըսելիք չի կայ, բայց կարծես թէ ես վառօթի հոտ կ'առնեմ»:

«Վառօթ», արձագանգեց ծերուկը, «իմ վաստկածս ընտանիքին հացին ու հագուստին չի բաւեր, ես ու՞սկից պիտի ունենամ վառօթը»:

«Լաւ, լաւ, ծեր բարեկամ, կեցի՛ր սա սայլիդ մէջլինները քիչ մը աչքէ անցընենք»:

«Ո՛հ, ո՛չ, այդ չըլլար», գոչեց ծերունին, այլայլած, «իմ հարսերէս մին ծանր հիւանդ պառկած է սայլին մէջ, ու չի կրնար շարժիլ»: Եւ իբր հաստատութիւն հեծեծանքներ ու հառաչանքներ սկսան լսուիլ սայլակին մէջէն:

Սակայն ոստիկաններէն մին լոյսը սայլին մէջ ուղղեց և իր հրացանին փողովը սկսաւ խառնել յարգը՝ որուն վրայ կիները պառկած էին: «Այդ տեղ կարծր բան մը կայ» ըսաւ վերջապէս, ու ձեռքովը յարգը մէկ կողմ քշելով խոշոր հրացան մը դուրս քաշեց յարգին

տակէն: Կիները կը ճչէին ու մարդիկը տոգունեցան: Խաբէութիւնը երեւան ելած էր: Ոստիկանը խնդաց: «Հաճեցէք վար իջնել, բարի տիկիններ, եւ տեսնենք թէ այս գեղեցիկ խաղալիքներէն քանի հատ կը տանիք հարսանիք: Անտարակոյս խիստ հաճելի հարսանիք մը ըլլալու է աս:»

Կառքը խուզարկուելով քանի մը հըրացան ալ երեւան ելաւ... , գողերը ու կառքը կտ դարձուեցան ու ամենէն մօտ գիւղին պահակնոցը առաջնորդուեցան:

Ամիս մը վերջ դատաւարութիւնը տեղի ունեցաւ. դատը ծանր հանգամանք առաւ որովհետեւ խնդիրը առաջուց ծրագրուած, ոստիկանապետին պահակ զինուորները կաշառուած, ոստիկան մը սպաննուած, և նոյնիսկ ոստիկանապետը վիրաւորուած էր: Այդ սայլակը քոչըր Պապուի մեծ հայրն էր ու ասիկա իր տասներորդ ոճրագործութիւնն էր: Ուստի զայն ցկեանս Անգաման կղզիներն աքսորեցին, և միւսները Պապուին հայրն ու երկու հօրեղբայրներն ու զինքը— քսան տարուան տաժանակիր աշխատութեան դատապարտեցին:

* *

Պապու ինքզինքը գտաւ խիստ բարձր պատերով շրջապատուած ընդարձակ տեղ մը՝ ուր ամէն տարիքի ու աստիճանի մարդիկ կը գտնուէին. ոմանք փայտ կը կտրէին, ոմանք ջուր կը կրէին, ուրիշներ պատ կը շինէին, ուրիշներ գերաններ կը սղոցէին: Անգին խումբ մը մարդ նստեր գերձակութիւն կ'ընէին, սակայն Պապուի աչքերուն ամենէն գէղեցիկ երեւցողը միւսանկիւնն էր, ուր խումբ մը մարդիկ կապերտ կը զործէին. իր գոյներէ ախորժող աչքերը գամուած մնացին գոյնզգոյն թելերուն՝ որոնցմով կապերտները կը շինուէին: Իր ուշադրութիւնը կեդրոնացաւ գործաւորներէն միոյն՝ որ կանանչ գորգ մը կը շինէր մէջտեղը կարմիր միջո մասով մը:

«Բարե, մանչուկս, ինչո՞ւ ծոյլ, ծոյլ կայներ ես», հարցուց հաստ ձայնով մը, ու ծանր ձեռք մը ինկաւ Պապուին նիւհար ուսին վրայ: Տղան երբ դարձաւ, ու տեսաւ իրենց բանտապահը, խոշոր մարմնով կոշտ մարդ մը: Գլուխը կախեց, ի՞նչ ըսէր տասը տարեկան տղեկ մը:

«Պէտք է գիտնաս թէ հոս եկողը իր հացը հանելու է», կատակելով շարունակեց բանտապահը, ու հաճոյք մը ըզգաց երբ տեսաւ թէ տղեկը չփոթած ինչ ընելիքը չէր գիտեր: «Տղաս, պատուհաններէն ներս սողոսկելէ, խոշոր ոճիրներու մասնակցելէ վատ ուրիշ ի՞նչ կրնաս ընել, ի՞նչ արհեստէ կ'ախորժես:»

Պապուի խոշոր, սև աչքերը փայլեցան: «Կաղաչեմ, տէ՛ր», ըսաւ, և մատովը գոյնզգոյն թելերու անկիւնը ցոյց տալով, «Կապերտ գործել սորվիլ», ըսաւ: «Աւա, առտունները պարտիկ պաններուն կ'օգնես ջուր կրելով, կէսօրէ վերջերն ալ կրնաս քու ուզած արհեստդ սորվիլ», պատասխանեց բանտապահը:

(շարունակելի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Նոր Տարի

ՎԵՐ. Կ. Յ. Յ.

Քրիստիկ. Եկեղոյ. Եպսկոպոս ՏՐ. Ճ. Է. Մ.
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Նոր Տարին եւ «Նոր Աւետարան»ը

ՏՕԴԹ. Ա. ՃէՊէձԵԱՆ

Ծնունդի Պարսի Մը

Սարկուարոյ

ՏՐԿ. Ի. ՄԷՐԸԼ

Զախոյանի Միջ Հատկերպում

Արտօնատէր ՎԵՐ. Կ. Յ. Յարութիւնեան
Տնօրէն-խմբագիր Տ. Ճ. Խրլորեան
Տարեկան բաժնեկին— Սուրիա, 1.50
Սուր. ոսկի. արտասահման 1.50 տու-
ւար:

Հասցէ—

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP SYRIE